ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

AB certification

«16» 10 2023 ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ № 1

«ՆՎ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-05/23>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի միջև 2023թ.-ի փետրվարի 27-ին կնքվել է <<Ապրանքի մատակարարման>> թիվ 2.17 պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր): Համաձայն պայմանագրի №1 հավելվածի Վաճառողը ստանձնել է փոխանջատիչների, անջատիչների, գերլարման սահմանափակիչների մատակարարման պարտավորություն և նախատեսված ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանված եղել մինչև 2023թ.-ի մայիսի 31-ը: «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթները, այն է, «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել <<ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-05/23>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՆՎ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի միջև 2023թ.-ի փետրվարի 27-ին կնքված է թիվ 2.66 պայմանագրի 2.4.1 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. «ՆՎ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Ընկերության ընդհանուր բաժնի պետին՝ սույն որոշումը մեկօրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը:

Ա. Գասպարյան
Գլխավոր տնօրեն